ՆԱԽԱԳԻԾ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«---» հոկտեմբերի 2014թ N-----Ա

ՈՐՈՇՈՒՄ

ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության կառավարության 1999 թվականի օգոստոսի 31-ի «Հայաստանի Հանրապետության պետական և հասարակական նշանավոր գործիչներին նվիրված հուշարձանների իրականացման կարգը հաստատելու մասին» N 551 որոշմամբ հաստատված կարգի 2-րդ կետով և հիմք ընդունելով Երևանի ավագանու անդամ, Գարեգին Նժդեհի հուշարձան – կոթողի նախագծի բաց մրցույթի մրցութային և Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովների նախագահի՝ Երևանի քաղաքապետին ուղղված միջնորդագիրը՝

Երևանի ավագանին որոշում է.

Տալ համաձայնություն հայ մեծանուն պետական և ռազմական գործիչ Գարեգին Նժդեհի հուշարձանը Երևան քաղաքի Նալբանդյան - Արամի - Բուզանդ - Հանրապետություն փողոցներով պարփակված հատվածում տեղադրելու համար։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ –ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայ մեծանուն պետական և ռազմական գործիչ, քաղաքագետ և իմաստասեր Գարեգին Նժդեհը (1886 հունվարի 1-ը - 1955 դեկտեմբերի 21–ը, իսկական անունը՝ Գարեգին Արաքել Եղիշեի Տեր-Հարությունյան,) - մեր պատմության այն եզակի դեմքերից է, որի մեջ ներդաշնակորեն միաձուլվել են զինվորականն ու մտածողը, ազգային բարոյախոսն ու քաղաքական գործիչը և որն իր՝ հիրավի պատմաստեղծ կյանքով, հաստատաբար դասվում է հայոց առաջնագույն մեծերի շարքը:

Զորավար ու փիլիսոփա Գարեգին Նժդեհն իր կյանքը նվիրեց հայրենիքին ու ազգին՝ չկարևորելով անձնականը:

Նա ասում էր. «Նպատակն է թելադրում գերագույն պարտականությունները, իսկ հայրենասիրությունը՝ մարդկային առաքինությունների թագն ու պսակն է»:

Գարեգին Նժդեհի հուշարձանի տեղադրման վերաբերյալ Երևան քաղաքի ավագանու որոշման ընդունման համար հիմք է հանդիսանում Երևանի քաղաքապետարանի կողմից 2011թ. օգոստոսի 30-ին հայտարարված՝ Երևան քաղաքի Նալբանդյան-Արամի-Բուզանդ-Հանրապետության փողոցներով պարփակված հատվածում Գարեգին Նժդեհի հուշարձանի նախագծի բաց մրցույթը, որի արդյունքում՝ Երևանի քաղաքապետի 2011թ. դեկտեմբերի 1-ի N 609-Ա կարգադրությամբ ստեղծված մրցութային հանձնաժողովը հաղթող է ճանաչել քանդակագործ Գագիկ Ստեփանյանի և ՀՀ վաստակավոր ճարտարապետ Ասլան Մխիթարյանի հեղինակած գործը:

Նախագիծ-առաջարկը քննարկվել է Երևանի քաղաքապետին կից քաղաքաշինական խորհրդի գեղարվեստի հանձնաժողովի կողմից և միաձայն հավանության է արժանացել:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գարեգին Նժդեհի հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերի ընդունման կամ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտության չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԳԱՐԵԳԻՆ ՆԺԴԵՀԻ ՀՈՒՇԱՐՁԱՆԻ ՏԵՂԱԴՐՄԱՆԸ ՀԱՄԱՁԱՅՆՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒՓՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Գարեգին Նժդեհի հուշարձանի տեղադրմանը համաձայնություն տալու մասին» որոշման ընդունման կապակցությամբ Երևան համայնքի բյուջեի եկամուտներում և ծախսերում փոփոխություններ չեն սպասվում։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ